



**«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն Փակ  
Բաժնետիրական Ընկերության կողմից չֆինանսավորվող գործունեության  
տեսակները**

1. Որն իրենից ներկայացնում է վնասակար կամ շահագործող աշխատանք, շահագործվում է մանկական աշխատուժ, ինչպես նաև իրականացվում է խտրականություն՝ կազմակերպության աշխատողների օրինական իրավունքների իրացման հարցում,
2. որն իրենից ներկայացնում է օգոնային շերտին վնաս հասցնող հեղուկների, դեղամիջոցների, պեստիցիդների/հերբիցիդների/ և այլ վնասակար նյութերի արտադրություն կամ վաճառք և առաջացնում է վտանգված բնական միջավայրի զգալի ձևափոխում կամ դեգրադացիա,
3. որի հիմնական եկամուտը ստացվում է գենետիկորեն մոդիֆիկացված գյուղատնտեսական ապրանքների իրացումից, ինչի հետևանքով առաջացած ֆինանսական կախվածությունը կարող է անդրադառնալ Վարկատուի և հաճախորդի փոխհարաբերությունների վրա:
4. որից ստացված եկամուտները դասվում են հանցավոր ճանապարհով ստացված և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ Վարկատուի ներքին կանոնակարգերի համաձայն կասկածելի գործառնությունների թվին,
5. որը համարվում է ապօրինի ՀՀ օրենսդրության և միջազգային համաձայանագրերի համաձայն, ինչպիսիք են, օրինակ, ապօրինի դեղագործությունը, պարարտանյութերը, օգոնաքայքայիչ նյութերը, բնությանը վնաս պատճառող առարկաները կամ ապրանքներ, որոնք սահմանված են Վտանգված կենդանիների միջազգային առևտրի կոմիտեի (CITES) կողմից՝
6. որը հանդիսանում է զենքի և պայթուցիկների արտադրություն կամ վաճառք, ոգելից խմիչքների արտադրություն կամ վաճառք (բացառությամբ գարեջրի և գինու), ծխախոտի արտադրություն կամ վաճառք, զգալի քանակների վնասակար քիմիական նյութերի, արտադրություն, առևտուր, պահպանում և փոխանցում, կամ առևտրային նպատակով վնասական քիմիական նյութերի կիրառում որպես հիմնական գործունեություն,
7. որը հանդիսանում է խաղերի, խաղատների կազմակերպման գործունեություն որպես հիմնական գործունեություն, պոռնոգրաֆիայի և մարմնավաճառության հետ կապված ցանկացած գործունեություն, թափոնների անդրսահմանային առևտուր, բացառությամբ Բազելյան կոնվենցիայի և դրանից բխող կարգավորման պահանջներին համապատասխան թափոնների առևտրի,





FINCA®

10. որը հանդիսանում է տանկերներով նավթամթերքի և այլ վտանգավոր նյութերի ծովային փոխադրումներ, որոնք չեն համապատասխանում Միջազգային Նավագնացության Կազմակերպության (IMO) պահանջներին,

11. որը հանդիսանում է ռադիոակտիվ նյութերի արտադրություն և վաճառք (չի վերաբերվում բժշկական սարքավորումների, որակի հսկողության (չափման) սարքավորումների և ցանկացած այլ սարքավորումների գնմանը, որոնց ռադիոակտիվ աղբյուրը աննշան է և/կամ համարժեքորեն պաշտպանված), չսոսնձվող ասբեստային կտորների արտադրություն և վաճառք (չի վերաբերվում կապակցվող ասբեստային ցեմենտային թիթեղների գնմանը և օգտագործմանը, որտեղ ասբեստի պարունակությունը 20%-ից քիչ է), դրիֆթային ձկնորսություն ծովային միջավայրում՝ 2,5 կմ երկարությամբ ցանցերի կիրառմամբ,

12. որը հանդիսանում է ՀՀ օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով արգելված գործունեություն, որը առնչվում է կենսաբազմազանության ռեսուրսների կամ մշակութային ժառանգության պաշտպանությանը, ինչպես նաև տեղացի բնակչության տեղահանում իրենց ավանդական կամ սովորական բնակավայրից: